



Kingdom of the Netherlands



Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների
հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման



Kingdom of the Netherlands



Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման

Փորձագետ՝ Միհրան ՍԵՎՈՒՄՅԱՆ

«Սույն զեկույցը հնարավոր է դարձել է իրականացնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆոնդերի հաշվին՝ «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար ՔՀԿ-երի աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է՝ չհամընկնեն «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան:

Բովանդակություն

Հապավումների ցանկ	4
Նախաբան	5
Ընդհանուր նկարագիր	5
Մեթոդներ և գործիքներ	7
Մատուցվող ծառայությունների նկարագիր	7
Գնահատման ծրագրերի ամփոփված արդյունքներ	8
Ծառայությունների/ապրանքների հասանելիություն	8
Ծառայությունների/ապրանքների որակ	11
Ծառայությունների / ապրանքների առաջնահերթություն	13
Եզրակացություններ և ամփոփում	14
Հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման	17
ՄԻԱԿ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների ցանկ	
Հավելվածներ	17

ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
SUS	Տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ
ԿՍԿ	Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
ԹՆՕ	Թմրամիջոցների ներարկային օգտագործող
ԿՏ	Կրթական տեղեկատվական

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) վարակվածության և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումն սկսվել է 1988 թվականից: ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի վիճակագրությունը հետեւյալն է՝ 1988թ. մինչեւ 2017թ. փետրվարի 28-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2603 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 334-ը՝ 2014թ. ընթացքում, ինչն առավելագույնն է բոլոր անցած տարիների համեմատ:

2004 թվականից ՀՀ-ում իրականացվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիրը, որն իրականացվում է ՄԻԱՎ-ի, Տուբերկուլոզի եւ Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Վրաստանում Նիդերլանդների դեսպանատան կողմից ֆինանսավորված «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն եւ հզորացում» ծրագրի շրջանակներում անց են կացվել հարցումներ և գործնական հանդիպում քննարկումներ ՄԻԱՎ-ի հակազդման ազգային ծրագրի շրջանակներում ծառայություններ ստացող խմբերի ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում գնահատվել են ծրագրի շահառուներին ՄԻԱՎ-ի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում տրամադրվող ապրանքների և ծառայությունների հասանելիությունը, որակը և պահանջարկը:

Ընդհանուր նկարագիր

Ծրագիրը իրականացվել է մի քանի փուլով: Նախնական փուլում փորձագետի կողմից մշակվել է գնահատման մեթոդաբանություն, այնուհետ «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպությունը կազմակերպել է երկօրյա սեմինար-վարժանք, ուր հրավիրվել են ՄԻԱՎ-ի ոլորտում աշխատող կազմակերպությունները: Սեմինարի ընթացքում շահագրգիռ կազմակերպություններին ներկայացվել են ծրագրի նպատակները, ժամկետները, քննարկվել են ծառայությունների ցանկը և գնահատման մեթոդաբանությունը:

2017 թվականի հունվարին «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպությունը Վրաստանում Նիդերլանդների դեսպանատան կողմից ֆինանսավորված «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն եւ հզորացում» ծրագրի շրջանակներում

հայտարարարեց ենթադրամաշնորհային ծրագրի մրցույթ: Մրցույթը շահեցին հետևյալ կազմակերպությունները և մարտի 1-ից մեկնարկեցին գնահատման ծրագրերը՝

- SUS-ների և Տրանս* անձանց շրջանում - «Միացյալ ուղի» բարեգործական հասարակական կազմակերպությունը
- ԿՍԿ-ների շրջանում - «ՁԻԱԳ-ի կանխարգելման միավորում» հասարակական կազմակերպությունը
- ԹՆՕ-ների և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում - «Դրական մարդկանց հայկական ցանց» սոցիալական հասարակական կազմակերպությունը

Գնահատումը կատարվել է գնահատող խմբերի ստեղծման և այդ խմբերում առաջարկվող հարցերի շուրջ քննարկումների կազմակերպման միջոցով: Հարկ է նշել, որ SUS, ԿՍԿ և տրանս անձանց շրջանում անց են կացվել ֆոկլուս խմբերի քննարկումներ, իսկ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԹՆՕ-ների շրջանում շահառուների մի մասի քննարկումները հնարավոր չի եղել անցկացնել ֆոկլուս խմբերի օգնությամբ, և հետազոտությունը իրականացվել է հարցաթերթիկների միջոցով: Գնահատման ընթացքում շեշտը դրվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, SUS, ԹՆՕ, ԿՍԿ և տրանս* անձանց համար տրամադրվող ծառայությունների և ապրանքների հասանելիությանը, ինչպես նաև՝ որ ծառայություններն ու ապրանքներն են համարվում առավել կարևոր նշված խմբերի տեսանկյունից:

Գնահատման ծրագրերի ավարտից հետո կազմակերպվեց երկօրյա հանդիպում քննարկում, որտեղ կազմակերպությունները ներկայացրեցին իրենց զեկուլյցները, որոնք նաև ընդհանուր քննարկվեցին ծրագրային և ֆինանսական փորձագետների մասնակցությամբ:

Կատարվող կարիքների գնահատման արդյունքում մշակվելու են առաջարկներ ՄԻԱՎ-ի դեմ պայքարի ազգային ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ինչպես ծրագրային, այնպես էլ բյուջեի մասով:

Յուրաքանչյուր համայնքում առաջարկվել է անցկացնել տասական խմբային հանդիպում, յուրաքանչյուր խմբում 10-15 մասնակից: Տրանսպերենտ մարդկանց շրջանում առաջարկվել է 5-7 մասնակցից բաղկացած խմբեր:

Այսպիսով ԿՍԿ-ների համայնքից գնահատմանը մասնակցել են 130 շահառու (10 ֆոկուս խմբային քննարկում), ԹՆՕ-ների շրջանում 120 շահառու (բոլորը հարցաթերթիկներով), ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում 150 շահառու (100 հարցում և 5 ֆոկուս խումբ 10-ական մասնակիցով) և 70 ՏՍՏ-ների եւ 50 Տրանս* անձանց շրջանում (բոլորը ֆոկուս խմբերի քննարկման միջոցով):

Յուրաքանչյուր խումբը ներկայացրել է առաջարկներ, որոնք ներառել են հետևյալ կետերը՝

- Ծառայությունների/ապրանքների հասանելիություն
- Ծառայությունների/ապրանքների որակ
- Ծառայությունների/ապրանքների առաջնահերթություն

Մատուցվող ծառայությունների նկարագիր

Առաջարկում ենք օայս բաժնում մանրամասն նկարագրել թե Հայաստանում ծրագրերը որ հիմնադրամի/ների կողմից են իրականացվում և ինչ ծառայություններ են մատուցվում, որ խմբերին և քանակականը:

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) պայմանավորված հիվանդության (ՄԻԱՎ վարակ) եւ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչեւ 2016թ. սեպտեմբերի 30-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2451 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, ներառյալ երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 44 դեպք:

Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացվում են միջոցառումներ ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանակներում, որոնցից են՝

Նկարագիր	Թիրախներ 2017
ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման եւ վնասի նվազեցման ծրագրերի իրականացում	4220
ԹՆՕ-ներին փոխարինող բուժման տրամադրում	490
ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխար գելման ծրագրերի իրականացում	3100
SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում	4000
ՅՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտներին, բուժման կլինիկական եւ լաբորատոր մոնիտորինգի իրականացում	1700

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՍՓՈՓՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ծառայությունների/ապրանքների հասանելիություն

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, SUS և Տրան* անձանց շրջանում:

Մասնակիցների 50% ավելին նշել են, որ այս ծառայությունը հասանելի է մասամբ հետևյալ պատճառներով՝

- Բուժհաստատությունների սահմանափակ լինելը,
- Կատարվում է հանրային բուժօգնություն՝ բացահայտման խնդիր,
- Գործում է մարզկենտրոնում միայն՝ տրանսպորտի/տեղափոխման խնդիր
- Բուժհաստատության ժամային եւ այցելության օրերի սահմանափակում
- Տրանս* անձանց համար առկա է հանրային բուժօգնություն այցելելու խնդիր:

2. ԿՏ նյութերի եւ գիտելիքների տրամադրում

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, ԹՆՕ, SUS և Տրան*անձանց շրջանում:

Մեծամասնությունն շահառուները նշել են, որ ծառայության հասանելիության վրա ազդում է

- առաջին աշխատողների գերծանրաբեռնվածությունը,
- մարզերում գրասենյակների բացակայությունը

3. Պահպանակների տրամադրում

Գնահատումը կատարվել է 520 ԿՍԿ, SUS և Տրանս*անձանց, ԹՆՕ, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Մեծամասնությունն շահառուները ծառայությունը գնահատել են հասանելի: Հասանելիության խնդիրները կապված են եղել տրամադրման կետերի պակաս (միայն գրասենյակում) և իրազեկման հետ:

4. Սեռավարակների¹ հետազոտություն և բուժում

Գնահատումը կատարվել է 250 ԿՍԿ, SUS և Տրանս* անձանց շրջանում:

Շահառուների կեսից ավելին նշել է, որ ծառայությունը հասանելի է մասամբ, հետևյալ պատճառներով՝

- Բացահայտման խնդիր
- Աշխատանքային ժամերի խնդիր
- Տրանսպորտի/տեղափոխման խնդիր մարզերում, քանի որ մարզում գործում է մեկ կետ

5. Առօրիչ աշխատանք/Հավասարը հավասարին խորհրդատվություն

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, ԹՆՕ, SUS և Տրանս*անձանց շրջանում:

Գրեթե բոլոր ԿՍԿ-ները, SUS և Տրանս* շահառուները (ընդհանուր մասնակիցների 67 %) նշել են առօրիչ աշխատողների քանակի պակաս, եղած աշխատողների գերծանրաբեռնվածություն և դրա հետևանքով ծառայության ոչ լիովին հասանելիություն:

6. Լուրբիկանտների տրամադրում

Գնահատումը կատարվել է 120 SUS և Տրանս* անձանց շրջանում:

Մեծամասնությունն շահառուները ծառայությունը գնահատել են հասանելի: Հասանելիության խնդիրները կապված են եղել տրամադրման կետերի պակաս (միայն գրասենյակում) և իրազեկման հետ:

7. Հավասարը հավասարին խորհրդատվություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Բոլոր շահառուները նշել են, որ ծառայությունը հասանելի է, սակայն առկա է աշխատակիցների գերծանրաբեռնվածություն:

¹ Կանդիդոզ, տրիխոմոնիազ, գոնորեա և գարդներելոզ

8. Սոցիալական աջակցություն

Գնահատումը կատարվել է 270 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԹՆՕ-ների շրջանում:
Շահառուների իշխող մեծամասնությունը նշել է, որ ծառայությունը հասանելի է:

9. Հոգեբանական խորհրդատվություն

10. Իրավաբանական խորհրդատվություն

Այս երկու ծառայությունների գնահատումը կատարվել է 270 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԹՆՕ-ների շրջանում, շահառուների իշխող մեծամասնությունը նշել է, որ ծառայությունները հասանելի են:

11. Ներարկիչների և ասեղների տրամադրում

Գնահատումը կատարվել է 120 ԹՆՕ-ների շրջանում:
Շահառուների իշխող մեծամասնությունը նշել է, որ ծառայությունը հասանելի է:

12. Բժիշկների շարժական խմբի ծառայություն

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:
Շահառուները նշել են, որ ծառայությունը հասանելի է ոչ բոլորին՝ իրազեկվածության պակասի պատճառով:

13. Փոխօգնության խմբեր

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:
Բոլոր շահառուները նշել են, որ ծառայությունը հասանելի է:

14. Մեթադոնային փոխարինող բուժում:

Գնահատումը կատարվել է 120 ԹՆՕ-ների շրջանում:
Շահառուների 100% նշել է, որ ծառայությունը հասանելի է:

15. ՀՈՎ բուժման տրամադրում:

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:
Բոլոր շահառուները նշել են, որ ծառայությունը հասանելի է:

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, SUS և Տրանս* անձանց շրջանում:

Ծառայության տրամադրման որակի հետ կապված մասնակիցները ունեցել են հետևյալ նկատառումները`

- Բուժանձնակազմի անհարգալից վերաբերմունք
- Բժշկի կողմից խորհրդատվության բացակայություն
- Թեստավորման ավտերնատիվ տարբերակների պակաս
- Մարզերում գրասենյակների բացակայություն
- Բուժանձնակազմի աշխատաժամերի խնդիր
- Մարզերում տրանսպորտի խնդիր

Արաջարկվել է կազմակերպել ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն անմիջապես ծրագրերի գրասենյակներում՝ օգտագործելով արագ թեստեր:

2. ԿՏ նյութերի եւ գիտելիքների տրամադրում

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, ԹՆՕ, SUS և Տրանս* անձանց շրջանում:

Շահառուները նշել են որակի հետ կապված հետևյալ թերությունները`

- նյութերը անարդյունավետ են
- նյութերը չեն թարմացվում
- մատչելի լեզվով չեն գրված
- առաջարկվել է օգտագործել գիտելիքների տրամադրման այլընտրանքային եղանակներ՝ ֆիլմեր, հոլովակներ, հաղորդումներ

3. Պահպանակների տրամադրում

Գնահատումը կատարվել է 520 ԿՍԿ, SUS և Տրանս*անձանց, ԹՆՕ, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Պահպանակների տրամադրման ծառայության որակի հանդեպ եղել են հետևյալ նկատառումները`

- դժգոհություն պահպանակների որակից (SUS, ԿՍԿ, ԹՆՕ)
- բաժանման կետերի սակավություն (ԿՍԿ)

- քանակի պակաս (Տրանս*)
- Ցանկություն է հայտնվել, որպիսի լինեն կանանց պահպանակներ և օրալ հարաբերությունների համար պահպանակներ

4. Սեռավարակների հետազոտություն և բուժում

Գնահատումը կատարվել է 250 ԿՍԿ, SUS և Տրանս*անձանց շրջանում:

Ծարայության որակի բարձրացման նպատակով առաջարկվել է ընդլայնել ծրագրի շրջանակներում հետազոտվող և բուժվող սեռավարակների ցանկը:

5. Աուլթիչ աշխատանք/Հավասարը հավասարին խորհրդատվություն

Գնահատումը կատարվել է 370 ԿՍԿ, ԹՆՕ, SUS և Տրանս*անձանց շրջանում:

Աուլթիչ աշխատանքի որակի բարձրացման նպատակով առաջարկվել է սահմանումներ ձևակերպել աուլթիչ աշխատանքի բնութագրման և պարտականությունների վերաբերյալ:

6. Լուբրիկանտների տրամադրում

Գնահատումը կատարվել է 120 SUS և Տրանս*անձանց շրջանում:

Առաջարկվել է լուբրիկանտների հետ համատեղ ցանկացողներին տրամադրել օգտագործման ուղեցույց:

7. Հավասարը հավասարին խորհրդատվություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Ծարայության որակի հանդեպ եղել է նկատառում

- այլ խորհրդատուների կամ անձանց ներկայություն խորհրդատվության ժամանակ :

8. Սոցիալական աջակցություն

Գնահատումը կատարվել է 270 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԹՆՕ-ների շրջանում:

Ծառայության որակի հանդեպ նկատառումներ չեն եղել:

9. Հոգեբանական խորհրդատվություն

10. Իրավաբանական խորհրդատվություն

Այս երկու ծառայությունների գնահատումը կատարվել է 270 ՄԻԱՎ-ով ապրող

մարդկանց և ԹՆՕ-ների շրջանում, շահառուների 90%-ից ավելը նշել են, որ ծառայությունների որակից գոհ են:

11. Ներարկիչների և ասեղների տրամադրում

Գնահատումը կատարվել է 120 ԹՆՕ-ների շրջանում:

Շահառուների 94% նշել է, որ ծառայությունների որակից գոհ են:

12. Բժիշկների շարժական խմբի ծառայություն

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Շահառուների 73% նշել է, որ ծառայությունների որակից գոհ են:

13. Փոխօգնության խմբեր

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Շահառուների 75% նշել է, որ ծառայությունների որակից գոհ են:

14. Մեթադոնային փոխարինող բուժում:

Գնահատումը կատարվել է 120 ԹՆՕ-ների շրջանում:

Ծառայությունն ստացող բոլոր շահառուները նշել են, որ ծառայությունների որակից գոհ են:

15. ՀՌՎ բուժման տրամադրում:

Գնահատումը կատարվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում:

Որակի նկատմամբ եղել են հետևյալ դժգոհություններ

- Բուժհաստատության աշխատանքային ժամերի վերաբերյալ 9%
- Բուժանձնակազմը սպասացնում է 8%
- Բուժանձնակազմի վատ վերաբերմունք 6%
- Գաղտնիության խնդիրներ 2%

Ծառայությունների / ապրանքների առաջնահերթություն

Ծարայությունների առաջնահերթությունը սույն գեկույցում ներկայացվում է ըստ թիրախային խմբերի: Խմբերին արաջարկվել է ընտրել այն ծառայությունները, որոնք իրենց կարծիքով առավել կարևոր են և պիտի պահպանվեն ծրագրային գործընթացների կրճատման դեպքում:

1. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տրամադրվող ծառայություններ

- Հավասարը հավասարին խորհրդատվություն
- Հոգեբանական խորհրդատվություն

2. ԹՆՕ տրամադրվող ծառայություններ

- Մեթադոնային փոխարինող բուժում
- Ներարկիչների և ասեղների տրամադրում

3. SUS-ներին և Տրանս* անձանց տրամադրվող ծառայություններ

- ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն
- Սեռավարակների հետազոտություն և բուժում

4. ԿՍԿ-ներին տրամադրվող ծառայություններ

- ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն
- Սեռավարակների հետազոտություն և բուժում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՍՓՈՓՈՒՄ

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն

Հաշվի առնելով շահառուների կողմից բարձրացված խնդիրները ԿՀԽ ծառայության կազմակերպման արդյունավետության բարձրացման համար առաջարկում ենք՝ Ստեղծել պայմաններ և խթանել հետազոտության և խորհրդատվության իրականացումը ծրագրային գրասենյակներում, պատրաստելով խորհրդատուներ իրականացնող կազմակերպությունների կազմից և ավելի լայն կիրառելով արագ թեստերի օգտագործումը:

Պատվիրատուները մարզկենտրոնների, Երևան քաղաքի, Գյումրի, Վանաձոր քաղաքի շահառուների համար պայմանագիր կնքեն այն բուժաստատությունների հետ, որոնք հնարավորություն կունենան ապահովել ԿՀԽ ծառայության շուրջօրյա կամ շահառուներին հարմար ժամերին հասանելիություն, իսկ մնացած քաղաքներում ցերեկային ժամերին ապահովել առնվազն մեկ մասնագետի ներկայություն: Նշված ծրագրի իրականացման համար ազգային ռազմավարական ծրագրում անհրաժեշտ է իրականացնել ծառայության ավելացում, մասնավորապես «Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար սեմինար-վարժանքների անցկացում» ենթածրագրի շահառուների թիվը ավելացնել 30-35-ով:

2. ԿՏ նյութերի եւ գիտելիքների տրամադրում

ԿՏ նյութերի եւ գիտելիքների տրամադրման ծառայության հիմնական թերություններից շահառուները նշել են աուֆրիչ աշխատողների գերծանրաբեռնվածությունը, մարգերում գրասենյակների բացակայությունը, նյութերի ընդհանուր անարդյունաավետությունը: Առաջարկվում է կիրառել գիտելիքների տրամադրման այլընտրանքյին մեթոդներ (ինտերնետ), թարմացնել ԿՏ նյութերի բովանդակությունները՝ հաշվի առնելով շահառուների կարծիքը: Մարգերում ստեղծել կետեր/գրասենյակներ, որտեղ հնարավոր կլինի վարժանքների, ուսուցողական հանդիպումների անցկացում:

3. Պահպանակների տրամադրում

Նշվել են աուֆրիչ աշխատողների գերբեռնվածություն և տրամադրման կետերի պակաս: Առաջարկվել է տրամադրել օռալ և կանացի պահպանակներ: Դժգոհություն է հայտնվել նաև պահպանակների որակից:

Աուֆրիչ աշխատողների գերբեռնվածության մասով առաջարկում ենք ազգային ռազմավարական ծրագրի բյուջետավորման հատվածում ներառել մեկ աուֆրիչ աշխատողի հաշվով սպասարկվող շահառուների թվաքանակի միավոր գնի ճշգրտման գործակից: Դրա արդյունքում հնարավոր կլինի գնահատել հաստատուն ծախսերի կայունության աստիճանը շահառուների թվաքանակի համեմատ և դրանց աճի դեպքում փոփոխել միավորի գները: Նման գործակցի հաշվարկման համար անհրաժեշտ է լրացուցիչ վերլուծել ծառայություններ մատուցողների մեկ աուֆրիչին բաժին ընկնող շահառուների միջին թվաքանակը, աուֆրիչի կողմից նրանց կոնտակտի մեջ մտնելու հաճախականությունը, տևողությունը և դրանց արդյունքում մշակել նորմատիվային ցուցանիշ:

Պահպանակների որակի մասով առաջարկում ենք սահմանել հստակ որակական պահանջներ գնվող պահպանակների նկատմամբ, հնարավորության դեպքում գնահատել օրալ և կանացի պահպանակների գնման տարբերակներ:

4. Սեռավարակների հետազոտություն և բուժում

Սեռավարակների հետազոտության և բուժման ծառայությունների մասով շահառուները որպես խնդիր առանձնացրել են բացահայտման հնարավորությունը, տարածքային անհասանելիությունը: Նշված ծառայության հասանելիության բարձրացման համար առաջարկում ենք կիրառել նույն մեխանիզմը, ինչ որ ԿՅԻՍ ծառայության մասով, մասնավորապես ավելացնել բուժհաստատությունների թիվը, որոնցում շահառուները հնարավորություն կունենան հետազոտվել և բուժվել:

Առաջարկվում է նաև ավելացնել հետազոտվող սեռավարակների ցանկը, հատկապես սիֆիլիսի և հեպատիտների հետազոտությունը:

Հարկ է նշել, որ ազգային ռազմավարական ծրագրում շահառուների շրջանում սեռավարակների բուժումը որպես թիրախային ցուցանիշ ամրագրված չէ:

5. Աուլթրիչ աշխատանք/Հավասարը հավասարին խորհրդատվություն

Շահառուները որպես խնդիր առանձնացրել են մասնագետների գերբեռնվածությունը և արդյունքում ծառայության ոչ լիարժեք մատուցումը:

Տես՝ պահպանակների տրամադրման վերաբերյալ նկատառումները:

6. Լուրբիկանտների տրամադրում

Արաջարկ է ստացվել տրամադրել օգտագործման ուղեցույց:

7. Հավասարը հավասարին խորհրդատվություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում

Շահառուները որպես խնդիր առանձնացրել են այլ անձանց ներկայությունը խորհրդատվության ժամանակ: Խնդրի լուծումը ծառայությունը տրամադրող կազմակերպության ներքին կանոնակարգի շտկման մեջ է: Անհրաժեշտության դեպքում կարելի է իրականացնել խորհրդատուների վարժանքներ:

8. 9. 10. Սոցիալական աջակցության, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվության ծառայությունները շահառուների կողմից գնահատվել են որպես հասանելի:

11. Ներարկիչների և ասեղների տրամադրում

Նկատառումներ չեն եղել, ծառայությունը հասանելի է:

12. Բժիշկների շարժական խմբի ծառայություն

Բժիշկների շարժական խմբի ծառայության մասով ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում առկա է տեղեկացվածության պակաս, ուստի ոչ բոլորն են օգտվում նշված ծառայությունից: Անհասանելիության պատճառ է հանդիսանում նաև փոքր թիրախները: Այսպես 2017-2021թթ նախատեսվում է «ՄԻԱՎ վարակով հիվանդներին ինսամբի և աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում սպասարկվող անձանց թիվը 2017թվականի 1500-ից դիմաց 2021թ-ին հասցնել մինչև 3000:

Թիրախների աճին զուգընթաց արդյունավետության բարձրացման համար առաջարկում ենք ՄԻԱՎ վարակով հիվանդների շրջանում անցկացնել լրացուցիչ ակցիաներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել տեղեկացվածության մակարդակը: Նշված ծառայությունների մատուցման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունն չկա, քանի որ ազգային ռազմավարական ծրագրում արդեն իսկ ներառված են մի շարք միջոցառումներ:

13. Փոխօգնության խմբեր

Փոխօգնության խմբերի մասով շահառուների մոտ հասանելիության խնդիրներ չեն արձանագրվել: Ազգային ծրագրում փոխօգնության խմբերի մասով ևս նախատեսվում է շահառուների թվաքանակի ավելացում:

14. Մեթադոնային փոխարինող բուժում:

Մեթադոնային փոխարինող բուժման մասով մեծամասնությունը ասել է, որ ծառայությունները հիմնականում հասանելի են: Ազգային ծրագրով նախատեսվում է մեթադոնային բուժում ստացող ԹՆՕ-ների թվաքանակի անընդհատ ավելացում՝ 2021 թվականի համար հասցնելով 800-ի 2017թ-ի 480-ի դիմաց:

15. ՀՌՎ բուժման տրամադրում:

ՀՌՎ բուժման տրամադրման մասով հիվանդների շրջանում անհասանելիության դեպքեր որպես այդպիսիք չեն արձանագրվել:

Հավելված 1

Հասանելիության, որակի և առաջնահերթության գնահատման ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների

ՑԱՆԿ

1. ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվություն և հետազոտություն
2. ԿՏ կյութերի եւ գիտելիքների տրամադրում
3. Պահպանակների տրամադրում
4. Սեռավարակների հետազոտություն և բուժում
5. Աուրիչ աշխատանք/Հավասարը հավասարին խորհրդատվություն
6. Լուրբիկանտների տրամադրում

7. Հավասարը հավասարին խորհրդատվություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում
8. Սոցիալական աջակցություն
9. Հոգեբանական խորհրդատվություն
10. Իրավաբանական խորհրդատվություն
11. Ներարկիչների և ասեղների տրամադրում
12. Բժիշկների շարժական խմբի ծառայություն
13. Փոխօգնության խմբեր
14. Մեթադոնային փոխարինող բուժում:
15. ՀՌՎ բուժման տրամադրում:

Հավելված 2

Համաձայնագիր մասնակցի տեղեկացված լինելու մասին

Համայնքի այս հանդիպմանը մասնակցելու համար ցանկալին է, որ Դուք որոշակի տեղեկություն տրամադրեք Ձեր, Ձեր նախասիրությունների և ՄԻԱՎ-ին առնչվող ապրանքների ու ծառայությունների հետ Ձեր շփման մասին:

Ձեր կողմից տրամադրված տեղեկատվությունը կօգտագործվի «_____» խմբի կողմից Ձեր երկրում ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների բարելավման համար:

Հանդիպմանը Ձեր կողմից տրամադրվող ամբողջ տեղեկատվությունը կլինի անանուն:

Բոլոր հաշվետվությունների մեջ Դուք կներկայացվեք որպես պատասխանող կողմ:

Ձեր կողմից ստորև տրամադրված տեղեկատվությունը ոչ մի կերպ չի առնչվելու անձամբ Ձեզ: Այս տեղեկատվության հավաքագրումը մեզ թույլ կտա ի նկատի առնել և ուշադրություն դարձնել Ձեր նախընտրություններին և փորձին՝ երաշխավորելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ձեր համաձայնությունը նշանակում է, որ Դուք ընդունում եք այս պայմանները և մեզ թույլ եք տալիս օգտագործել այն տեղեկատվությունը, որը մենք հավաքագրում ենք Ձեզանից՝ պահպանելով անանունությունը, ինչպես նկարագրված է վերևում:

Եթե Դուք պատրաստ եք տալ Ձեր համաձայնությունը, ապա խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը:

Եթե Ձուք պատրաստ չեք տալ Ձեր համաձայնությունը, մի լրացրեք այս ձևաթերթիկը:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՁԵՎԱՆՍՈՒՇ

<ul style="list-style-type: none"> • Գրանցման ամսաթիվը՝ 	7. Խնդրում ենք նշել Ձեր ներկայիս բնակության վայրը:		
<ul style="list-style-type: none"> • Խորհրդատուի անունը՝ 	Քաղաք		
1. Ձեր տարիքը՝	Գյուղ		
2. Ի՞նչ սեռի հետ եք ձեզ նույնականացնում :	Կին <input type="checkbox"/> Տղամարդ <input type="checkbox"/> Տրանս* <input type="checkbox"/> Կին <input type="checkbox"/> Տրանս <input type="checkbox"/> Տղամարդ <input type="checkbox"/> Այլ <input type="checkbox"/>	Հայաստանից դուրս	ՆՇԵԼ՝
3. Խնդրում ենք նշել Ձեր պատկանելությունը հետևյալ խմբերին / խնդրում ենք նշել բոլոր /:	SUS		<input type="checkbox"/>
	Տրանսգենդեր		<input type="checkbox"/>
	ՄԻԱՎ-ով ապրող		<input type="checkbox"/>
	ԹՆՕ		<input type="checkbox"/>
	ԿՍԿ		<input type="checkbox"/>
4. Խնդրում ենք նշել Ձեր ՄԻԱՎ կարգավիճակը:	Դրական		<input type="checkbox"/>
	Բացասական		<input type="checkbox"/>
	Չգիտեմ		<input type="checkbox"/>
	Չեմ ցանկանում պատասխանել		<input type="checkbox"/>
5. Եթե դրական, ապա ներկա պահին Դուք ընդունո՞ւմ եք հակառետրովիրուսային բուժում:	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	8. Վեջին մեկ տարվա ընթացքում օգտվե՞լ եք արդյոք ծրագրային ծառայություններից:	
6. Դուք կազմակերպության աշխատակի՞ց եք:	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ		

*Խնդրում ենք չնշել Ձեր անունը այս հարցաթերթիկի մեջ:

Դուք համաձայն եք: Այո Ոչ

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental
Organization



«ՆՈՐ ՍԵՐՈՆԳ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն

Email: newgenerationngo@gmail.com

<http://ngngo.net/>

